

**Մ.Բ.-Ն ԸՆԴԴԵՄ ԼԵՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի ՎՃԻՌԸ**

Նարինե Գասպարյան

2005թ. հոկտեմբեր
«ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
<<http://www.legalguide.am>>

Սույն վերլուծությունում տեղ գտած եզրահանգումներն արվել են «Իրավական ուղեցույց» Հասարակական կազմակերպության նախագահ Նարինե Գասպարյանի կողմից, ով էլ լիովին պատասխանատու է դրանց բովանդակության համար: Սույն վերլուծությունը չի կարելի դիտարկել որպես տվյալ գործի հետ կապված իրավական խորհրդատվություն: Այս վերլուծությունը և նրանում արտահայտված կարծիքները հետապնդում են բացառապես կրթական և տեղեկատվական նպատակներ: Վերլուծության մշակմանն աջակցել է Հայաստանի Հանրապետությունում Միացյալ Թագավորության և Հյուսիսային Իռլանդիայի դեսպանատունը:

Սույն վերլուծությունում արտահայտված կարծիքները հանդիսանում են հեղինակինը և պարտադիր չէ որ համընկնեն «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության տեսակետների հետ:

Ռեսուրսները իրականացվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից:

. 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
ՄԱՍ 1. Մ.Բ-Ն ԸՆԴԴԵՄ ԼԵՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ.....	5
Ա. Գործի փաստերի համառոտագիրը.....	5
Բ. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հիման վրա դիմումատուի բողոքը.....	9
Գ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը.....	11
ՄԱՍ 2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ.....	16
ՄԱՍ 3. ԳՈՐԾԻ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ.....	31

Ներածություն

Սույն վերլուծությունն իրականացվել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից 2004 թվականի ապրիլի 27-ին Մ.Բ.-ն ընդդեմ Լեհաստանի գործով կայացված վճռի հիման վրա: Գործը վերաբերում է կալանքի և ձերբակալության օրինականության հարցերին և Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայով (այսուհետ «Եվրոպական կոնվենցիա» կամ «ՄԻԵԿ») երաշխավորված ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտմանը:

Սույն վերլուծությունը նպատակ ունի բազմակողմանիորեն ուսումնասիրել գործի փաստերը, ներառյալ Դիմումատուի գանգատի և Ֆրանսիայի կառավարության հակափաստարկները: Վերլուծությունը նաև կանդրադառնա Եվրոպական դատարանի մոտեցումներին՝ վիճարկվող իրավունքների և ազատությունների մեկնաբանման հարցում: Սույն վերլուծությունում մանրամասն անդրադարձ չի կատարվի արդարացի փոխհատուցման հարցերին: Գործի ուսումնասիրությունը, մասնավորապես վճռի վերլուծությունը կկատարվի թեստի կիրառման միջոցով, որով Դատարանը առաջնորդվում է ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների և ազատությունների խախտումները քննելիս: Վերլուծությունը նաև կանդրադառնա գործի էական հանգամանքներին, որոնք նշանակալից դեր են ունեցել և դարձել է կարևոր ուղեցույց Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ու ազատությունների մեկնաբանման հարցում:

Այս վերլուծությունը ունի ուսուցողական բնույթ և նպատակ ունի իրավաբանի մասնագիտություն ունեցողներին, այդ թվում դատավորներին, փաստաբաններին, իրավաբանական ծառայություններ մատուցողներին, մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերում ներգրավված անձանց և իրավաբանական կրթություն ստացող ուսանողներին, հնարավորություն ընձեռել ծանոթանալու այն չափանիշներին և ստանդարտներին որոնցով առաջնորդվում է Եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները մեկնաբանելիս:

ՄԱՍ 1. Մ.Բ-Ն ԸՆԴԴԵՄ ԼԵՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԻ

Ա. Գործի փաստերի համառոտագիրը

Դիմումատունը՝ պարոն Մ.Բ-ն, Լեհաստանի քաղաքացի է: Նա ծնվել է 1967 թվականին: Դիմումատունը 1995 թվականի հուլիսի 19-ին Եվրոպական դատարան գանգատ է ներկայացրել ընդդեմ Լեհաստանի Հանրապետության: Դատարանը համաձայնվել է իր անունը չհրապարակելու դիմումատուի խնդրանքին: Դիմումատունը մահացել է 1998 թվականի հուլիսի 26-ին: Իր 2001 թվականի մարտի 8-ի որոշմամբ դատարանը վճռեց, որ գործը կարող է ներկայացնել դիմումատուի հայրը՝ պարոն Հ.Բ-ն:

1995 թվականին Բիալիստոկի տարածքային դատախազը խարդախության հատկանիշներով հետաքննություն սկսեց⁶:

1995 թվականի մարտի 28-ին դիմումատուին մեղադրանք առաջադրվեց մի խումբ անձանց կողմից կատարված խարդախության մեջ, և 1995 թվականի մարտի 30-ին Բիալիստոկի տարածքային դատախազը նրան կալանավորելու որոշում կայացրեց: Դիմումատունը կասկածվում էր պետական բանկից մի խումբ անձանց հետ խարդախությանը 380.000 ԱՄՆ դոլար վարկ ստանալու մեջ: Վարկը չէր վերադարձվել: Հետագայում որոշվեց, որ գործում եղած ապացույցները հավաստում են դիմումատուին առաջադրված մեղադրանքը, իսկ նրա վարքագիծը և գործի հանգամանքները վկայում են, որ դիմումատունը ազատության մեջ մնալու դեպքում կխոչընդոտի քրեական վարույթի իրականացմանը:

Մ.Բ-ի գործով հետագա դեպքերի և վարույթների ժամանակագրությունը նկարագրված է ստորև բերված Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ	
1995 թվականի ապրիլի 3	Դիմումատուի փաստաբանը բողոքարկեց կալանավորման մասին որոշումը, պատճառաբանելով, <i>inter alia</i> , որ նրա վատ առողջությունը անհամատեղելի է կալանավորման հետ:
1995 թվականի ապրիլի 6	Դիմումատունը անձամբ բողոքարկեց կալանավորելու մասին որոշումը:
1995 թվականի ապրիլի 11	Բիալիստոկի տարածքային դատախազը դիմումատուին մեղադրանք առաջադրելու մասին որոշում կայացրեց: Դրանում նշվում էր, որ հետաննքության ընթացքում ձեռք բերված ապացույցները հաստատում են դիմումատուին առաջադրված մեղադրանքը:

¹ Գործով իրադարձությունների ժամանակ գործող 1969 թվականի Քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ բաժինը, որն ուներ հետևյալ վերնագիրը. «Վարույթի կողմերը, պաշտպանը, տուժողների ու հասարակության ներկայացուցիչները», դատախազին նախատեսում էր որպես քրեական վարույթի կողմ: Օրենսգրքի համապատասխան հոդվածներից բխում էր, որ դատախազը քրեական վարույթի ընթացքում իրականացնում էր հետաքննչական և դատախազական գործառույթներ: Մասնավորապես, հետաքննության ավարտից հետո, նա մեղադրական եզրակացությունը ներկայացնում էր տվյալ գործը քննելու իրավասություն ունեցող դատարան և ներկայացնում մեղադրող կողմը:

1995 թվականի ապրիլի 10	Վարչավայի տարածքային դատարանը, <i>բանտախցում</i> տեղի ունեցած նիստում մերժեց կալանավորելու մասին որոշման դեմ բերված դիմումատուի փաստաբանի բողոքը ² :
1995 թվականի ապրիլի 25	Դիմումատուն խնդրեց իրեն ազատ արձակել:
1995 թվականի ապրիլի 27	Վարչավայի տարածքային դատարանը մերժեց դիմումատուի՝ 1995 թվականի ամրիլի 6-ին ներկայացված բողոքը:
1995 թվականի ապրիլի 28	1995 թվականի ապրիլի 11-ին Վարչավայի տարածքային դատարանը թույլ չտվեց դիմումատուին բողոք ներկայացնել 1995 թվականի ապրիլի 11-ի որոշման դեմ, համաձայն որի դատախազությունը մեղադրանք էր առաջադրել դիմումատուին:
1995 թվականի ապրիլի 28	Բիալիստոկի տարածքային դատախազը մերժեց իրեն ազատ արձակելու վերաբերյալ դիմումատուի 1995 թվականի ապրիլի 25-ի դիմումը:
1995 թվականի մայիսի 18	Բիալիստոկի վերաքննիչ դատախազը առանց փոփոխման թողեց այդ որոշումը, գտնելով, որ չնայած համաձայն բժշկական եզրակացության դիմումատուն տառապում է Մարֆանի սինդրոմից, ինչը կապող հյուսվածքների խանգարում էր և ազդում էր բազմաթիվ օրգանների, ներառյալ ոսկրային համակարգի, թոքերի, աչքերի, սրտի և երակների վրա, դիմումատուն գտնվում էր բանտի բժշկի բժշկական հսկողության ներքո:
1995 թվականի հունիսի 13	Դիմումատուին ներկայացված մեղադրանքները լրացվեցին խարդախության ևս երկու դեպքերով, այն է՝ կեղծ փաստաթղթերով երկու այլ բանկային վարկեր վերցնելը: Դատախազությունը, <i>inter alia</i> , հիմնվում էր Լեհաստանից և արտասահմանից ներկայացված բազմաթիվ փաստաթղթերի և այլ ապացույցների վրա: Նույն օրը, դատախազի կողմից հարցաքննվելիս, դիմումատուն խնդրեց այդ մեղադրանքների հիմքերի մանրամասն շարադրանքը գրավոր ուղարկել իրեն և իր փաստաբանին:
1995 թվականի հունիսի 26	Վարչավայի տարածքային դատարանը որոշում կայացրեց դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը երեք ամսով, մինչև 1995 թվականի սեպտեմբերի 29-ը, երկարացնելու մասին:
1995 թվականի հունիսի 28	Դիմումատուն ստացավ 1995 թվականի հունիսի 13-ին իր պահանջած փաստաթուղթը:

²1969 թ. քրեական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի համաձայն.

«Դատարանն իր որոշումը հրապարակում է դատական նիստի ժամանակ եթե դա նախատեսված է օրենքով, հակառակ դեպքում՝ բանտախցում տեղի ունեցած դատական նիստի ժամանակ...»

1969 թվականի քրեական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածը սահմանում է.

«Բանտախցում անցկացվող դատական նիստին կարող է ներկա լինել դատախազը (...). այլ կողմերը կարող են մասնակցել օրենքով նախատեսված դեպքերում:»

1995 թվականի հուլիսի 13	Դիմումատուն կրկին խնդրեց իրեն ազատ արձակել:
1995 թվականի հուլիսի 17	Բիալիստոկի տարածքային դատախազը մերժեց ազատ արձակվելու վերաբերյալ դիմումատուի խնդրանքը:
1995 թվականի հուլիսի 17	Դիմումատուն խնդրեց իրեն ազատ արձակել մասնագիտացված օֆթալմոլոգիական հետազոտություն անցնելու համար, նշելով, որ ինքը տառապել է հիվանդությամբ, որը լուրջ ազդեցություն է ունեցել իր տեսողության վրա, և որ իր տեսողությունը լրջորեն վնասվել է իր կալանավորման արդյունքում:
1995 թվականի հուլիսի 27	Վարչավայի վերաքննիչ դատարանն առանց բավարարման թողեց դիմումատուի կալանքի տակ պահելու ժամկետը ևս երեք ամսով երկարացնելու վերաբերյալ Վարչավայի տարածքային դատարանի որոշման դեմ 1995 թվականի հունիսի 26-ին իր բերած բողոքը:
1995 թվականի օգոստոսի 11	Բիալիստոկի վերադաս դատախազն առանց փոփոխման թողեց 1995 թվականի հուլիսի 17-ի որոշումը այն մասին, որ դիմումատուի մեղքը հաստատող ապացույցները ուժեղացնում են նրան առաջադրված մեղադրանքը:
1995 թվականի սեպտեմբերի 12	Ազատ արձակվելու վերաբերյալ 1995 թվականի սեպտեմբերի 8-ին դիմումատուի ներկայացրած հերթական խնդրանքը մերժվեց Բիալիստոկի տարածքային դատախազի կողմից:
1995 թվականի սեպտեմբերի 15	Ազատ արձակվելու վերաբերյալ դիմումատուի հերթական խնդրանքը կրկին մերժվեց: Դատախազությունը գտնում էր, որ վարույթների ընթացքում արդեն ձեռք բերված ապացույցները հաստատում են դիմումատուին առաջադրված մեղադրանքները և առկա են իրական հիմքեր ենթադրելու, որ ազատ արձակվելու դեպքում նա ճնշում կգործադրի վկաների նկատմամբ:
1995 թվականի սեպտեմբերի 18	Դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվեց մինչև 1995 նոյեմբերի 29-ը: Վարչավայի տարածքային դատարանը գտավ, որ պետք է լրացուցիչ միջոցներ ձեռք առնել լրացնելու համար մինչ այդ հետաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները:
1995 հոկտեմբերի 26	Վարչավայի վերաքննիչ դատարանը մերժեց Վարչավայի տարածքային դատարանի 1995 թվականի սեպտեմբերի 18-ի որոշման դեմ բերված դիմումատուի բողոքը:
1995 թվականի նոյեմբերի 16, 17, 20 և 21	Դիմումատուին թույլատրվեց ծանոթանալ գործի նյութերին և նա տեղեկացավ, որ երեք օրվա ընթացքում միջնորդություն ներկայացնելու դեպքում իրավունք ունի լրացուցիչ ապացույցներ ներկայացնել քննության համար:
1995 թվականի նոյեմբերի 21	Բիալիստոկի տարածքային դատախազը կրկին մերժեց ազատ արձակել դիմումատուին: Նույն օրը դիմումատուն խնդրեց Բիալիստոկի վերաքննիչ դատախազից վերացնել այդ որոշումը:
1995 թվականի	Վարչավայի վերաքննիչ դատարանը որոշում կայացրեց

Նոյեմբերի 23	դիմումատուի կալանքի ժամկետը մինչև 1995 թվականի դեկտեմբերի 29-ը երկարացնելու մասին:
1995 թվականի Նոյեմբերի 23	Նույն օրը դատարանի քարտուղարությունը ստացավ դիմումատուի նամակը, որում նա խնդրում էր դատարանից թույլ տալ իրեն մասնակցելու իր կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ կայանալիք դատական նիստին ³ :
1995 թվականի Նոյեմբերի 26	Վարչավային վերաքննիչ դատարանը անփոփոխ թողեց դիմումատուի կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ Վարչավայի տարածքային դատարանի 1995 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը:
1995 թվականի Նոյեմբերի 27	Դատարանը պատասխանեց, որ դիմումատուի խնդրանքը ներառվել է գործի նյութերում:
1995 թվականի դեկտեմբերի 8, 12 և 15	Դիմումատուն ծանոթացավ իր գործի նյութերին:
1995 դեկտեմբերի 14	Վարչավայի վերաքննիչ դատարանն առանց բավարարման թողեց Դիմումատուի կանալքի ժամկետը մինչև 1995 թվականի դեկտեմբերի 29-ը երկարացնելու մասին 1995 թվականի նոյեմբերի 23-ի որոշման դեմ դիմումատուի բերած բողոքը:
1995 դեկտեմբերի 15	Դիմումատուն խնդրեց, որպեսզի իրեն հնարավորություն տրվի ծանոթանալ իր գործի նյութերի այն էջերին, որոնք գործից հանվել ու փոխանցվել են 1995 թվականի հունիսին իր գործից առանձնացված մեկ այլ գործի նյութեր:
1995 դեկտեմբերի 21	Բիալիստոկի տարածքային դատախազն ավարտեց հետաքննությունը, որոշելով, որ գործի նյութերը պարունակում են բավարար ապացույցներ մեղադրական եզրակացությունը դատարան ներկայացնելու համար:
1995 դեկտեմբերի 21	Դատախազը որոշում կայացրեց դիմումատուին տրամադրել փաստաթղթերը, որոնք նա խնդրել էր դեկտեմբերի 15-ին:
1995 դեկտեմբերի 21	Բիալիստոկի վերաքննիչ դատախազը թույլ չտվեց դիմումատուին իր կալանքի ժամկետը երկարացնելու մասին 1995 թվականի նոյեմբերի 23-ի որոշման դեմ բողոք բերել:
1996 հունվարի 8	Դիմումատուն խնդրեց իրեն ազատ արձակել և 1996 թվականի հունվարի 10-ին առաջարկեց որպես գրավ մուծել:

³. Գործով իրադարձությունների ժամանակ կողմերի մասնակցությունը դատական նիստերին մասնակցության հարցը կարգավորվում էր 1969թ.-ի քրեական դատավարության օրենսգրքի 87 և 88 հոդվածներով, որոնք սահմանում են.

«Նոր քրեական դատավարության օրենսգրքի 249-րդ հոդվածի համաձայն, նախքան խափանման միջոց կիրառելու մասին որոշման ընդունումը, դատարանը պետք է լսի հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձին: Եթե կալանավորված անձը փաստաբան ունի, ապա նա պետք է իրավունք ունենա մասնակցելու դատական նիստին: Պարտադիր չէ փաստաբանին տեղյակ պահել դատական նիստի օրվա և ժամի մասին, եթե այդ մասին չի խնդրում կասկածյալը և եթե դա չի ձգձգի վարույթը:

Դատարանը պետք է կալանավորված անձի փաստաբանին տեղյակ պահի դատական նիստի տեղի և ժամի մասին, որի ընթացքում որոշում է կայացվելու կալանքի ժամկետի երկարացման կամ կալանք կիրառելու կամ կալանքի ժամկետի երկարացման դեմ բերված բողոքների վերաբերյալ»:

	5000 PLN [լեհական դրամի միավոր]:
1996 հունվարի 19	Դիմումատուն խնդրեց իրեն տրամադրել գործի նյութերը, նշելով որ իրեն չեն տրամադրել թիվ 85-րդ, թիվ 86-րդ և թիվ 87-րդ կետերը:
1996 հունվարի 19	Դիմումատուն, 1996 թվականի հունվարի 19-ին կազմված և 1996 թվականի հունվարի 24-ին դատարան ներկայացված նամակով խնդրեց թույլ տալ իրեն նորից ծանոթանալ գործի նյութերին:
1996 հունվարի 25	Վարչավայի տարածքային դատարանը մերժեց գրավով ազատելու մասին դիմումատուի խնդրանքը:
1996 հունվարի 25	Դիմումատուին ազատ արձակելը մերժելու մասին որոշումը Վարչավայի վերաքննիչ դատարանն անփոփոխ թողեց 1996 թվականի փետրվարի 13-ին:
1996 թվականի փետրվարի 21	Դիմումատուն նամակով նորից խնդրեց իրեն տրամադրել գործի նյութերը:
1996 թվականի փետրվարի 28	Գործի նյութերը դատախազության կողմից ուղարկվեցին Բիալիստոկի կալանավայր և 1996 թվականի մարտի 1-ին դիմումատուն կրկին ծանոթացավ դրանց:
1996 թվականի մարտի 7	Վարչավայի տարածքային դատարանը նիստ գումարեց կապված գրավով ազատվելու մասին դիմումատուի միջնորդության և մուծման ենթակա գրավի գումարի չափի հետ: Դիմումատուի փաստաբանը մասնակցեց այդ նիստին: Դատարանը գրավի չափը սահմանեց 15000 PLN: Դիմումատուն ազատ արձակվեց գրավի մուծման օրը:
1998 թվականի հուլիսի 26	Դիմումատուն մահացավ Մարֆանի սինդրոմից:
1998 թվականի օգոստոսի 20	Վարչավայի տարածքային դատարանը կարճեց նրա գործով քրեական վարույթը:

Բ. Եվրոպական կոնվենցիայի հիման վրա բերված դիմումատուի գանգատը

Պարոն Մ.Բ-ն ՄԻԵԿ-ի 25-րդ հոդվածի հիման վրա բերված իր գանգատը Եվրոպական հանձնաժողով ներկայացրեց 1995 թվականի հուլիսի 25-ին: Դիմումատուն մասնավորապես բողոքում էր, որ ինքը ձերբակալվել էր Դատախազի կողմից որը «դատավոր կամ արդարադատություն իրականացնելու իրավասությամբ օրենքով սահմանված կարգով օժտված այլ պաշտոնատար անձ» չէր, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով: Բացի դրանից, դիմումատուն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն բողոքում էր, որ իր կալանավորմանն առնչվող վարույթների ընթացքում նա երբևէ չի տարվել դատավորի մոտ: Հետևաբար, նա չի ունեցել իր կալանավորումը հիմնավորող դատախազության փաստարկները վիճարկելու որևէ արդյունավետ հնարավորություն:

Գանգատը Դատարանին հանձնվեց 1998 թվականի նոյեմբերի 1-ին, երբ ուժի մեջ մտավ Կոնվենցիայի 11-րդ արձանագրությունը: Գանգատը, գործի քննելության նպատակով հանձնվեց Դատարանի կանոնակարգի 26-րդ կանոնի 1-ին կետի համաձայն ձևավորված Չորրորդ բաժանմունքին: 2001 թվականի մարտի 8-ին Դատարանը գանգատը մասնակիորեն ընդունելի համարեց: 2001 թվականի նոյեմբերի 1-ին Դատարանը փոփոխություն մտցրեց Բաժանմունքի կազմում (Կանոն 25, կետ 1-ն) և գործը փոխանցվեց նոր կազմ ունեցող Չորրորդ

Բաժանմունքին (Կանոն 52, կետ 1-ին): 2003 թվականի հունվարի 28-ի որոշմամբ Դատարանը ընդունելի հռչակեց դիմումատուի գանգատն առ այն, որ դիմումատուն կալանավորման առնչությամբ անհապաղ չի տարվել «դատավորի կամ օրենքով դատական իշխանություն իրականացնելու համար լիազորված պաշտոնատար անձի մոտ» և որ իր կալանավորման ժամկետի երկարացման վերաբերյալ վարույթները իրապես մրցակցային չեն եղել: Դատարանը մերժեց գանգատը մնացած մասերով:

Աղյուսակ 2.-ում անդրադարձ է կատարվում Եվրոպական կոնվենցիայի հիման վրա բերված դիմումատուի բողոքներին և 2004 թվականի մարտի 23-ին կայացած դռնփակ լսումների ժամանակ դիմումատուի բարձրացրած ենթադրյալ խախտումների դեմ Լեհաստանի կառավարության փաստարկներին:

Աղյուսակ 2

Հոդվածները, պահանջները ենթադրաբար խախտվել են	Դիմումատուի գանգատը	Լեհաստանի կառավարության հակափաստարկները
<p>5(3) հոդված, որը սահմանում է հետևյալը</p> <p>«Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:»</p>	<p>Դիմումատուն բողոքում էր, որ ինքն ազատությունից զրկվել էր Դատախազի, ոչ թե «դատավորի կամ արդարադատություն իրականացնելու իրավասությամբ օրենքով սահմանված կարգով օժտված այլ պաշտոնատար անձի» որոշմամբ, ինչպես պահանջում է Եվրոպական Կոնվենցիան:</p>	<p>Կառավարությունը ոչ չմեկնաբանեց բողոքը:</p>
<p>5-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է հետևյալը.</p> <p>«Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի</p>	<p>Դիմումատուն բողոքում էր, որ իր կալանավորմանն առնչվող վարույթների ընթացքում նա երբևէ չի տարվել դատավորի մոտ: Յետևաբար, նա չի</p>	<p>Կառավարությունը ընդունեց, որ դիմումատուն վարչավայի տարածքային և վերաքննիչ դատարաններում իրեն կալանքի տակ պահելու ժամկետի երկարացմանը վերաբերող վարույթներին</p>

<p>վիճարկելու կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:»</p>	<p>իր ունեցել կալանավորումը հիմնավորող դատախազության փաստարկները վիճարկելու արդյունավետ հնարավորություն:</p>	<p>իր չի մասնակցել, և նշեց, որ դա պայամանավորված էր նրանով, որ վիճարկվող ժամանակահատվածում գործող քրեական դատավարության օրենսգիրքը թույլ չէր տալիս կալանքի տակ գտնվող անձին կամ նրա փաստաբանին ներկա գտնվելու դատական նիստերին, որտեղ որոշվում էր իր կալանավորման օրինականության հարցը:</p>
--	--	---

9. Եվրոպական դատարանի վճիռը

Ստորև բերված Աղյուսակ 3-ը անդրադառնում է Եվրոպական դատարանի առջև բերված դիմումատուի գանգատին, Լեհաստանի կառավարության կողմից բանավոր հնչեցրած և գրավոր հուշագրում ներկայացված առարկություններին, ինչպես նաև դիմումատուի բարձրացրած բողոքների վերաբերյալ Դատարանի դիրքորոշմանը: Այն նաև պարզաբանում է Եվրոպական դատարանի վճիռը՝ մատնանշելով ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով երաշխավորված դիմումատուի իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ դիմումատուի ներկայացրած գանգատի կապակցությամբ Եվրոպական դատարանի հիմնավորումները:

Աղյուսակ 3

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5 –ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ		
Դիմումատուի գանգատը	Լեհաստանի կառավարության առարկությունները	Եվրոպական դատարանի վճիռը
<p>Դիմումատուն պնդում էր, որ Դատախազը, ինչպես որ նրա կարգավիճակը սահմանված էր գործի իրադարձությունների տեղի ունենալու ժամանակ Լեհաստանի գործող օրենսդրությամբ, չէր կարող համարվել դատական իշխանություն իրականացնող մարմին, և հետևաբար չէր կարող</p>	<p>Կառավարությունը չնեկնաբանեց այս բողոքը:</p>	<p>Դատարանը հիշատակեց, որ Նիեդբալան ընդդեմ Լեհաստանի (<i>Niedbala v. Poland</i> (թիվ 27915/95, «48-57, 4 հուլիսի 2000թ.) գործով իր վճռում, արդեն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք գործի հանգամանքները տեղի ունենալու ժամանակ գործող Լեհաստանի օրենսդրության համաձայն</p>

<p>օժտված լինել կալանավորման մասին որոշում կայացնելու իրավասությամբ: Դիմումատուին Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա բողոքում էր, որ ինքն ազատությունից զրկվել է ոչ թե «դատավորի կամ այլ պաշտոնատար անձի, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն»⁴, այլ Դատախազի որոշմամբ: Գործի հանգամանքների տեղի ունենալու ժամանակ Լեհաստանի գործող օրենսդրության համաձայն դատախազը նաև իրականացնում էր գործի հետաքննությունը և դրանից հետո դատական վարույթներում պաշտպանում մեղադրանքը: Դիմումատուին պնդում էր, որ դատախազը գործադիր իշխանության ներկայացուցիչ էր⁵:</p>		<p>Դատախազը կարող էր համարվել «անկախությամբ» և «անաշառությամբ» օտված «դատական իշխանություն իրականացնող» պաշտոնատար անձ, ինչպես պահանջում է 5-րդ հոդվածի 3-րդ կետը: Դատարանն այս գործով 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում արձանագրեց, առ այն, որ Դատախազը չի բավարարում այդ պարտադիր երաշխիքներին: Դատարանը գտավ, որ այս գործը նման է Նիեբալայի (<i>Niedbala</i>) գործին: Դատարանը արձանագրեց, որ սույն գործով այլ եզրահանգման գալու համար հիմքեր չկան: Չետևաբար Դատարանը եզրակացրեց, որ «դատավորի կամ օրենքով դատական իշխանություն իրականացնելու համար լիազորված այլ պաշտոնատար անձի մոտ բերվելու» դիմումատուի իրավունքը չի հարգվել: Չետևաբար առկա է</p>
---	--	---

⁴ 1985 թվականի հունիսի 20-ի ակտի համաձայն Լեհաստանի Չանրապետությունում արդարադատությունն իրականացնում են դատարանները: Դատարաններն են՝ վերաքննիչ դատարանը, տարածքային և շրջանային դատարանները: Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն Գերագույն դատարանը ցածր աստիճանի դատարանների նկատմամբ ունի վերահսկողական իրավասություն: Դատախազական մարմինների մասին 1995 թվականի հունիսի 20-ի ակտի, որը սահմանում է դատախազական մարմինների կառուցվածքի, գործունեության և կազմակերպման հիմնական սկզբունքները, 1-ին հոդվածը սահմանում է հետևյալը.

«¹ Դատախազական մարմիններն են՝ Գլխավոր դատախազը, դատախազները և զինվորական դատախազները: Դատախազները և զինվորական դատախազները ենթարկվում են Գլխավոր դատախազին:

² Գլխավոր դատախազը դատախազական բարձրագույն մարմինն է, նրա գործառույթներն իրականացնում է Արդարադատության նախարարը»:

Ակտի 2-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

«Դատախազական մարմինը պետք է ապահովի օրինականության ամրապնդումն ու հանցագործությունների քննությունը»:

⁵ Գործի հանգամանքները տեղի ունենալու ժամանակ Լեհաստանի պետական մարմինների փոխհարաբերությունները սահմանված էին ժամանակավոր օրենսդրությամբ, մասնավորապես

		Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ		
Դիմումատունն պնդում էր, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները չեն պահպանվել, քանի որ իր կալանավորման առնչությամբ իրականացված վարույթների ժամանակ չի պահպանվել մրցակցության սկզբունքը: Ոչ դիմումատունն և ոչ իր փաստաբանը իրավունք չեն ունեցել մասնակցելու դատական վարույթներին կամ ծանոթանալ դիմումատուի կալանավորումը հիմնավորող դատախազության փաստարկներին ⁶ :	Ինչ վերաբերում է բողոքի այս մասին էությանը, ապա Կառավարությունն ընդունեց, որ կալանավորման ժամկետի երկարացման ընթացքում դիմումատունն չի մասնակցել Վարչապալի տարածքային և վերաքննիչ դատարաններում իր կալանավորման օրինականության հարցի քննման վարույթներին: Դրա պատճառն այն է, որ այդ ժամանակ գործող քրեական դատավարության օրենսգրքը թույլ չի տալիս կալանքի տակ գտնվող անձին կամ նրա փաստաբանին մասնակցել իր կալանավորման օրինականության որոշման վերաբերյալ դատական նիստին:	Դատարանը հիշատակեց, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն կալանավորված անձն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու իր կալանավորման նյութական ու ընթացակարգային պայմանները, որոնք 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով էական են իր կալանավորման «օրինականության» որոշման համար (տե՛ս Բրոգանն ու մյուսները ընդդեմ Միավորված Թագավորության (Brogan and Others v. the United Kingdom) գործով 1998 թվականի նոյեմբերի 29-ի վճիռը, Շարք Ա թիվ. 154-B, էջ. 34, կետ 65): Չնայած միշտ չէ որ պարտադիր է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի տակ ընկնող վարույթները համապատասխանեն նույն երաշխիքներին, որոնք 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում են քաղաքացիական կամ քրեական դատաքննությունների

1992 թվականի հոկտեմբերի 17-ի Սահմանադրական ակտով: Ակտի 1-ին հոդվածը իշխանությունների տարանջատման սկզբունքը սահմանում էր հետևյալ կերպ.

«Պետությունում օրենսդիր իշխանությունն իրակայացնում են Լեհաստանի Հանրապետության Սեյմը և Սենատը, գործադիր իշխանությունն իրականացնում է Լեհաստանի Հանրապետության նախագահը և նախարարների խորհուրդը, իսկ դատական իշխանությունն իրականացնում են անկախ դատարանները»:

Ակտի 56-րդ հոդվածի համաձայն Նախարարների խորհուրդը կազմված է Վարչապետից, փոխվարչապետից և նախարարներից:

⁶ 1969 թվականի քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն «քրեական վարույթ իրականացնող մարմինները [ներառյալ դատախազը] պետք է ուսումնասիրեն և հաշվի առնեն ինչպես մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող այնպես էլ նրան արդարացնող ապացույցները»:

		<p> համար (տես Դե Ուիլդը, Ունսն ու Վերսիպը ընդդեմ Բելգիայի գործով (De Wilde, Ooms and Versyp v. Belgium) 1971 թ. հունիսի 18-ի վճիռը, էջ. 42, կետ 78 ...), այդ վարույթները պետք է ունենան դատական բնույթ և ապահովի վիճարկվող ազատության սահմանափակման տեսակին համապատասխան երաշխիքներ: </p> <p> Կարևոր է, որ անձի համար ուն ազատությունը սահմանափակվում է հասանելի լինի դատարանը և նա պաշտպանի իրեն անձամբ կամ եթե անհրաժեշտ է ներկայացուցչության որևէ ձևի օգտագործմամբ (տես՝ Դե Ուիլդը, Ունսն ու Վերսիպը ընդդեմ Բելգիայի գործով (De Wilde, Ooms and Versyp v. Belgium) վճիռը, էջ 41, կետ 76 ...): Սույն գործով կալանքի ժամկետի երկարացման մասին որոշումն այդ ժամանակ կայացնում էր Դատախազը: Դատարան բողոք էր ներկայացվել կալանավորման որոշման դեմ: Օրենքով ոչ դիմումատուին անձամբ ոչ էլ իր փաստաբանը իրավունք չունեին մասնակցել այդ բողոքի հիման վրա իրականացվող վարույթին: Ավելին, օրենքը դիմումատուին կամ նրա փաստաբանին թույլ չէր տալիս մասնակցել իր կալանավորման օինականության քննարկմանը առնչվող ցանկացած այլ վարույթներին, ներառյալ այն վարույթներին, որոնց </p>
--	--	---

		<p>ընթացքում վիճարկվում էր կալանքի օրինականության հարցը, ներառյալ կալանքի ժամկետի երկարացման հարցի վերաբերյալ որոշման կայացումը:</p> <p>Նշված իրավական նորմերի դրույթներով նույնսիկ չէր պահանջվում դիմումատուի կալանավորումը հիմնավորող՝ դատախազության փաստարկները հայտնել դիմումատուին կամ նրա փաստաբանին: Հետևաբար դատախազությունը ազատ էր մասնակցել համապատասխան դատական նիստերին և կասկածյալի բացակայությամբ ներկայացնել նրան կալանք տակ պահելու ժամկետի երկարարացումը հիմնավորող լրացուցիչ փաստարկներ, մինչդեռ ոչ դիմումատուն ոչ էլ նրա փաստաբանը չունեին որևէ հնարավորություն ծանոթանալ այդ փաստարկներին, կամ առարկություններ կամ մեկնաբանություններ ներկայացնել դրանց վերաբերյալ: Դատարանի կարծիքով դիմումատուի վատթարացող առողջական վիճակը, որն <u>ի վերջո հանգեցրեց նրա մահվանը, հանգամանք էր, որը պետք է նպաստեր [դատական նիստերին] դիմումատուի ներկա գտնվելուն:</u></p> <p>Մեծ հավանականություն կար, որ դիմումատուի ներկայությունը իշխանություններին կհամոզեր, որ նա պետք է ազատ արձակվի: Վերը թվարկված նկատառումների լուսի ներքո, <u>Դատարանը որոշեց, որ Դիմումատուն չի ունեցել</u></p>
--	--	---

		մրցակցային սկզբունքի հիման վրա իրականացած վարույթների հանարավորություն: Դատարանը գտավ, որ դիմումատուի կալանքի օրինականության վիճարկման վարույթները լիովին չեն բավարարել 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված երաշխիքներին:
--	--	--

Աղյուսակ 4

ՀՈԴԱԾՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԵՆԹԱԴՐԱԲԱՐ ԽԱԽՏՎԵԼ ԵՆ	ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՈՐ
ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ կետ	Խախտում (միաձայն)
ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 4-րդ կետ	Խախտում (միաձայն)
Ոչ նյութական վնասի հատուցման համար Դիմումատուն պահանջում էր 100,000 եվրո: Ծախսերի և ծախքերի փոխհատուցման պահանջ չէր ներկայացվել:	Դատարանը շնորհեց 2,500 եվրոյին համարժեք Լեհական զլոտի (երկու հազար հինգ հարյուր եվրո) ոչ նյութական վնասի համար, գումարած բլոր հարկերը, որոնք ենթակա են գանձման այդ գումարից: Արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը մերժվեց:

ՍԱՍ II. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը մարդու հիմնական իրավունքներից մեկն է: Այն նախատեսված է մարդու իրավունքների պաշտպանության մի շարք միջազգային և տարածաշրջանային մեխանիզմներով:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և անձի անձեռնմխելիության իրավունք⁷:

ՄԻՅԴ-ի 9-րդ հոդվածը սահմանում է.

Ոչ ոք չպետք է ենթարկվի կամայական ձերբակալման, կալանքի կամ արտաքսման:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի⁸ 9-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ կետերը սահմանում են հետևյալը.

7 Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունված և հռչակված Գլխավոր Ասսամբլեայի 1948թ. դեկտեմբերի 10-ի 217 A (III) բանաձևով:

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման կամ կալանավորման: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:...

4. Ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու հետևանքով իր ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի դատարանում իր գործի քննության իրավունք, որպեսզի դատարանն անհապաղ կարողանա որոշել կալանավորման օրինականությունը և կարգադրել նրան ազատ արձակելու, եթե կալանավորումը անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով եղել է անօրինական ձերբակալման կամ կալանավորման զոհ, իրավունք ունի հայցային ուժ ունեցող փոխհատուցման:

ՔՔԻՄՄԴ-ի 11-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

Ոչ ոք չի կարող ազատագրվել միայն այն հիմքով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորությունը⁹:

ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

բ. անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

8 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ընդունված և բացված ստորագրումների, վավերացումների և միանալու համար Միավորված Ազգերի կազմակերպության 1966թ. դեկտեմբերի 16-ի 2200A (XXI) բանաձևով: Ուժի մեջ է մտել 1976թ. մարտի 23-ին՝ 49-րդ հոդվածի համաձայն:

⁹ ՔՔԻՄԴ 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն «1. Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը, և որ հայտարարված է պաշտոնապես, սույն Դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն Դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների՝ միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքի համաձայն իրենց մյուս պարտավորությունների հետ և չեն հանդիսանում խտրականություն բացառապես ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիմքով:

2. Այս դրույթը չի կարող հիմք ընդունվել 6,7,8 (1-ին և 2-րդ կետեր), 11, 15, 16 և 18-րդ հոդվածներից որևէ շեղում կատարելու համար:»

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

դ. անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

զ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքնության իրավունք կամ մինչև դատաքնությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքնության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

ՄԻԵԿ-ին կից 4-րդ արձանագրության 1-ին հոդվածը սահմանում է հետևյալը.

Ոչ մեկին չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ նա ի վիճակի չէ կատարելու պայմանագրային որևէ պարտավորություն:

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը պաշտպանվում է մարդու իրավունքների պաշտպանության մի շարք միջազգային և տարածաշրջանային մեխանիզմներով, որոնք ներառում են սակայն

չեն սահմանափակվում Միավորված Ազգերի Կազմակերպության Մարդու իրավունքների հանձնաժողովով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանով, Մարդու իրավունքների պաշտպանների հատուկ ներկայացուցչով, Մարդու և ժողովուրդների իրավունքների մասին աֆրիկյան խարտիայով, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայով:

Ազատության իրավունքը կարող է կիրառվել կարգավորման ենթակա տարբեր հարաբերությունների շրջանակի նկատմամբ, մասնավորապես.

Ազատության իրավունքի խախտումը կարելի է վիճարկել ազատությունից զրկելու բոլոր դրսևորումների դեպքում, անկախ այն հանգամանքից, թե ազատության սահմանափակումն արդյունք է քրեական օրենքի կիրառման, հոգեկան հիվանդության, թափառաշրջիկության, թմրամոլության թե միգրացիոն ստուգումների: Չնայան նրան, որ այս իրավունքի որոշ նորմեր կիրառելի են միայն այն անձնաց նկատմամբ ում քրեական մեղադրանք է առաջադրվել, այդուհանդերձ, մնացած երաշխիքները, մասնավորապես կալանքի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության իրավունքը, ինչպես երաշխավորված է ՔՔԻՄՄԴ-ի 9-րդ հոդվածի 4-րդ մասով, կիրառելի են այն բոլոր անձանց նկատմամբ, ում ազատությունը սահմանափակվել է ձերբակալման կամ կալանքի հետևանքով¹⁰:

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքները սերտորեն կապված են միմյանց: Ազատության իրավունքը առավել առնչվում է «ֆիզիկական ազատության» պաշտպանությանը, նկատի ունենալով այդ իրավունքով երաշխավորվող իրավունքների ու ազատությունների շրջանակները: Այս իրավունքները ներառում են սակայն չեն սահմանափակվում ստորև նշվածներով.

- իրավունք չզրկվել ազատությունից այլ կերպ, քան օրենքով նախատեսված հիմքերով և օրենքով սահմանված կարգին համապատասխան¹¹,
- կամակայան ձերբակալման, կալանավորման կամ արտաքսման չենթարկվելու իրավունքը¹²,
- դատավորի կամ օրենքով դատական իշխանություն իրականացնելու համար լիազորված պաշտոնատար ածի մոտ տարվելու իրավունք¹³,
- իր կալանավորման օրինականությունը վիճարկելու համար վարույթ հարուցելու իրավունք¹⁴:

Ազատության իրավունքը նաև ներառում է մի շարք իրավունքներ որոնք կապված են կալանավորների նկատմամբ վերաբերմունքի և հարգանքի հետ,

¹⁰. Միավորված Ազգերի Կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտե [UNHRC]. (1982). Հիմնական առաջարկություն թիվ 6, հոդված 6: Մարդու իրավունքների միջազգային մարմինների կողմից ընդունված հիմնական հանձնարարականների և առաջարկությունների ժողովածու (HRI\GEN\1\Rev.1 at 6 (1994). Ժնև:

¹¹ Տե՛ս ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 1-ին կետը: Տե՛ս նաև ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածի 1-ին կետը:

¹² Տե՛ս ՄԻԴԴ-ի 9-րդ հոդվածը: Տես նաև ՔՔԻՄԴ-ի 9-րդ հոդվածի 1-ին կետը և ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 1-ին կետը:

¹³ Տե՛ս ՔՔԻՄԴ-ի 9-րդ հոդվածի 1-ին կետը: Տե՛ս նաև ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ կետը:

¹⁴ Տե՛ս ՄԻԴԴ-ի 10-րդ հոդվածը: Տես նաև ՔՔԻՄԴ-ի 9-րդ հոդվածի 4-րդ կետը և ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 4-րդ կետը:

ինչպես նաև խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելմանը¹⁵:

Ինչպես նշվեց վերը անձի անձեռնմխելիության իրավունքը սերտորեն կապված է ազատության իրավունքի հետ, ինչպես նաև անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի, միավորումների ազատության և այլ համապատասխան իրավունքների կոնտեքստում մարդկանց անվտանգությունը և ապահովությունը երաշխավորելուն ուղղված պետության դրական պարտավորությունների հետ:

Անձի անձեռնմխելիության իրավունքը ներառում է շատ կարևոր իրավունքներ և ազատություններ, որոնք միասին ուղղված են ապահովելու արդար դատաքննությունը և ազատության ու անձնական անձեռնմխելիության իրավունքը: Լայն առումով, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը ապահովում է, որ ոչ ոք չենթարկվի անօրինական կամ կամայական կալանավորման, ոչ ոք չկալանավորվի միջազգային մեխանիզմներով, ներառյալ ՄԻԵԿ-ն, երաշխավորված իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելու հետևանքով, և որ ազատագրվում իրականացվի արդար դատաքննության իրավունքի ոլորտում սահմանված միջազգային ստանդարտներին համապատասխան:

Դատավորի/«պաշտոնատար անձի» մոտ տարվելու իրավունքը- ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ կետ

Մ.Բ.-ն ընդդեմ Լեհաստանի գործում դիմումատուն բողոքում էր, որ իր ձերբակալումն իրականացվել է Դատախազի որոշման հիման վրա և ոչ թե «դատավորի կամ այլ պաշտոնատար անձի, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն», ինչպես և պահանջվում է ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ կետով¹⁶: Դիմումատուն նշեց նաև, որ դատախազը գործադիր իշխանության ներկայացուցիչ է: Դատարանի անկախությունը կարևորագույն երաշխիք է այն անձանց համար, որոնց իրավունքները վիճարկվում են դատական կարգով կամ այլ այլ մարմնի առջև, որը օրենքով լիազորված է իրականացնելու «դատական իշխանություն»: Դատարանի անկախության սկզբունքը նախատեսված է բազմաթիվ միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում, ներառյալ Դատարանների անկախության վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության Զիմնարար սկզբունքները¹⁷, Եվրոպայի

¹⁵ Տե՛ս ՄԻԶԴ-ի 5-րդ հոդվածը: Տե՛ս նաև ՔՔԻՄԴ-ի 7-րդ և ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածները:

¹⁶ Գործով վարույթների իրականացման ժամանակ գործող Լեհաստանի օրենսդրության համաձայն Դատախազը ուներ գործը հետաքննելու իսկ հետո նաև մեղադրանքը դատարանում ներկայացնելու իրավասություն:

¹⁷ ՄԱԿ-ի դատական համակարգի անկախության հիմնական սկզբունքները: Ընդունված Միլանում 1985 թվականի օգոստոսի 26-ից սեպտեմբերի 6-ը տեղի ունեցած ՄԱԿ-ի յոթերորդ կոնգրեսի ժամանակ, որը նվիրված էր հանցագործությունների կանխմանն ու իրավախախտների նկատմամբ վերաբերմունքին և հաստատված Գլխավոր Ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/32 և 1985 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 40/146 Բանաձևերով:

«Դատավորների Կանոնադրությունը»¹⁸, Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և դերի վերաբերյալ Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(94)12 հանձնարարականն ուղղված անդամ պետություններին¹⁹, Եվրոպայի Խորհրդի Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական կանոնադրությունը²⁰ և «Դատավորի համընդհանուր կանոնադրություն»-ը²¹: Վերը թվարկված բոլոր փաստաթղթերի միակ նպատակը դատական իշխանության անկախության նվազագույն պահանջների և հիմնական սկզբունքների սահմանումն է:

Դատարանների անկախությունը, անկողմնակալությունը և արդյունավետությունը անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներն ու պայմաններն են, ինչպես նաև այն անձի իրավունքների, ում ազատությունը սահմանափակվել է լիազորված մարմնի որոշմամբ՝ համաձայն Կոնվենցիայի դրույթների: Դատարանների «անկախության» հարցը բազմիցս մեկնաբանվել է Եվրոպական դատարանի վճիռներում և Դատարանը սահմանել է, որ գործադիր իշխանությունից և [դատաքննության] կողմերից անկախ լինելը անկախ դատական համակարգի հիմնարար պահանջ է²²: Եվրոպական Դատարանի վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Դատարանը նաև սահմանել է բնութագրական որոշակի առանձնահատկություններ և պայմաններ, որոնց առկայության դեպքում «պաշտոնատար անձը» կարող է համարվել արդարադատություն իրականացնելու իրավասությամբ օժտված պատշաճ մարմին: Չնայած «պաշտոնատար անձը» պարտադիր չէ, որ ունենա դատավորի արդարադատություն իրականացնելու ոլորտում ունեցած բոլոր իրավասությունները կամ էլ լիովին համընկի «դատավորի» կարգավիճակին ինչպես իրավունքների, այնպես էլ պարտականությունների առումով, այնուամենայնիվ պահանջվում է որոշակի նվազագույն առանձնահատկությունների և պայմանների առկայություն, որպեսզի «պաշտոնատար անձը» իրավասու լինի դատական իշխանություն իրականացնել: Շիզերն ընդդեմ Շվեյցարիայի²³ (Schiesser v. Switzerland) գործով վճռում Եվրոպական Դատարանը նշում է.

¹⁸ Եվրոպայի դատավորների կանոնադրությունը, ընդունված 1993 թվականի մարտի 20-ին Վիսբադենում (Գերմանիա) Դատավորների միջազգային ասոցիացիայի տարածաշրջանային մարմնի՝ Դատավորների Եվրոպական ասոցիացիայի կողմից:

¹⁹ Դատավորների անկախության, արդյունավետության § դերի մասին Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի R (94)12 հանձնարարականն ուղղված անդամ պետություններին, ընդունված Նախարարների Խորհրդի կողմից, Նախարարների տեղակալների 1994 թվականի հոկտեմբերի 13-ին կայացած 518-րդ հանդիպման ժամանակ:

²⁰ Եվրոպայի Խորհրդի Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիա, ընդունված Ստրասբուգում, 1998 թվականի հուլիսի 8-ից 10-ը:

²¹ «Դատավորների համընդհանուր կանոնադրություն», միաձայն ընդունված, Դատավորների միջազգային միության կողմից, Թաիփի, 1999 թվականի նոյեմբեր:

²² Տե՛ս օրինակ Ռինգեյսեն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 1980 թվականի վճիռը:

²³ Տե՛ս Շիզերն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 1979 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը:

... «պաշտոնատար անձ» և «դատավոր» հասկացությունները նույնը չեն, այնուամենայնիվ «պաշտոնատար անձ»-ին բնութագրական են վերջինիս որոշ առանձնահատկություններ, այսինքն պաշտոնատար անձը պետք է ապահովի կալանավորված անձի համար երաշխիք հանդիսացող բոլոր պահանջների բավարարումը:

Նշված պահանջներից ամենազխավորը գործադիր իշխանությունից և [դատաքննության] կողմերից անկախությունն է ...

Ի հավելումն, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված է երկու պահանջ՝ դատավարական և նյութական: Դատավարական նորմերի պահանջները «պաշտոնատար անձ»-ին պարտավորեցնում են անձամբ լսել այն անձին, ով բերվել է իր մոտ ...; նյութական իրավունքի նորմերի պահանջները պարտավորեցնում են «պաշտոնատար անձ»-ին ուսումնասիրել անձի կալանավորման համար հիմք հանդիսացող և կալանավորումը բացառող հանգամանքերը, և որոշում կայացնել, իրավական տեսանկյունից, բավարար հիմնավորումների առկայության դեպքում՝ անձի կալանավորման, իսկ նման հիմնավորումների բացակայության դեպքում՝ կալանավորված անձի ազատ արձակման մասին...²⁴:

Դատարանը նշված վճռում դիտարկել է նաև այլ հարցեր, մասնավորապես այն, թե արդյոք «պաշտոնատար անձը» բավարարում է օրենքով դատական լիազորությունների կատարման համար սահմանված կրթության և փորձի պահանջները²⁵:

Իր այլ վճիռներում Եվրոպական Դատարանը հստակորեն սահմանում է դատական իշխանություն իրականացնելու լիազորություն ունեցող «պաշտոնատար անձի» անկախ և անկողմնակալ լինելու կարևորությունը: Զուբերն ընդդեմ Շվեյցարիայի²⁶ (Huber v. Switzerland) գործով վճռում Եվրոպական դատարանը նշում է.

...Կոնվենցիան հստակորեն չի բացառում այն հանգամանքը, որ դատական պաշտոնյան, որի որոշման հիման վրա անձը կալանավորվում է, կատարի նաև այլ պարտականություններ, սակայն վերջինիս անկողմնակալությունը կարող է կասկածի տակ դրվել, եթե նա իրավասու է միջամտել տվյալ քրեական դատավարությանը որպես դատախազական մարմնի ներկայացուցիչ²⁷:

Զուբերի գործում Դատարանը, հղում կատարելով իր մյուս վճիռներին, մասնավորապես Դե Ջոնգ (De Jong), Բալջեթ (Baljet) և Վան Դեն Բրինկ (Van Den Brink) գործերով վճիռները, նշում է, որ.

²⁴ Տե՛ս նույն տեղում կետ 31:

²⁵ Տե՛ս նույն տեղում կետ 32:

²⁶ Տե՛ս Զուբերն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 1990 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը:

²⁷ Տե՛ս նույն տեղում, կետ 43:

... ոստիկանը, որի որոշման հիման վրա իրականացվել է դիմումատուների կալանավորումը, կարող էր նաև միևնույն գործով, այն Զինվորական դատարան հանձնելուց հետո, ստանձնել մեղադրող կողմի դերը²⁸:

Հատկանշական է նաև այն, որ Հուբերն ընդդեմ Ցյուրիխի (Huber v Zurich) գործի վերաբերյալ կայացրած վճռի արդյունքում Ցյուրիխի Քրեական Դատավարության Օրենսգրքում 1991թ. սեպտեմբերի 1-ին կատարվել են մասնակի փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 1992թ. հուլիսի 1-ին: Կատարված փոփոխությունների համաձայն անձին կալանքի ենթարկելու մասին որոշում կայացնելու իրավասությունը վերապահվել է Քրեական գործերով դատարանին, և ոչ թե Տարածքային դատախազին (Որոշում թիվ DH (91) 40 1991թ. դեկտեմբերի 13)²⁹:

Դատարանը նմանատիպ վճիռ է կայացրել նաև Նիեդբալան ընդդեմ Լեհաստանի³⁰ (Niedbala v. Poland) գործով, որին դատարանը հղում է կատարել Մ.Բ.-ն ընդդեմ Ֆրանսիայի (M.B. v. France) գործով վճիռ կայացնելիս: Նիեդբալայի գործում Դատարանը կրկին առանձնացրեց այն հանգամանքը, որ «պաշտոնատար անձը» պետք է բավարարի որոշակի պահանջներ մինչ «դատական իշխանություն» իրականացնելը: Դատարանը մասնավորապես նշեց, որ.

... Մինչ «պաշտոնատար անձ»-ին սույն դրույթի իմաստով «դատական իշխանության» իրականացումը հանձնարարելը, նա պետք է բավարարի որոշակի պահանջներ, որոնք կամայական կամ չհիմնավորված ազատության սահմանափակման դեպքում ձերբակալված անձին կտրամադրեն համապատասխան երաշխիքներ³¹:

Դատարանը վճռում այնուհետ առավել հանգամանորեն բացատրություններ տվեց նշված պահանջների և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ, մասնավորապես նշելով, որ.

... Այսպիսով, «պաշտոնատար անձ»-ն պետք է լինի անկախ գործադիր իշխանությունից և [գործով] կողմերից: Այս կապակցությամբ, ձերբակալման մասին որոշում ընդունելիս օբյեկտիվության փաստը հատկապես կարևորվում է. եթե պարզվի, որ որոշում կայացնելիս «պաշտոնատար անձ»-ն կարող է հետագայում միջամտել տվյալ քրեական դատավարությանը հօգուտ դատախազության, ապա նրա անկախությունը և անկողմնակալությունը կասկածի տակ կդրվի: ... «Պաշտոնատար անձ»-ն պետք է լսի իր մոտ բերված անձին և պարզի արդյոք կալանավորումը իրավական տեսանկյունից հիմնավորված է, թե ոչ: Եթե կալանավորումն անհիմն է, ապա «պաշտոնատար անձ»-ն պետք է իրավասություն ունենա կալանավորվածին ազատ արձակելու մասին որոշում կայացնել ...³²:

²⁸ Տե՛ս նույն տեղում կետ 42:

²⁹ URL: <http://www.echr.coe.int/eng/EDocs/EffectsOfJudgments.html>

³⁰ Տե՛ս Նեյդբալան ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի հուլիսի 4-ի վճիռը:

³¹ Տե՛ս նույն տեղում կետ 48:

³² Տե՛ս նույն տեղում կետ 49:

Նիկոլոսյան ընդդեմ Բուլղարիայի³³ և Ասենովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի³⁴ գործերով իր վճիռներում Դատարանը նորից նշեց, որ մարդու ազատության իրավունքին գործադրի իշխանության ներկայացուցիչների կողմից միջամտության նկատմամբ դատական վերահսկողությունը 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված երաշխիքի կարևոր դրսևորում է և հետևաբար պաշտանատար անձը, նախքան դատական իշխանություն իրականացնելը, պետք է բավարարի վերը նշված պահանջներին:

Եվրոպական Դատարանի վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Դատարանը հանգամանորեն հաշվի է առնում որոշակի պահանջներ, որոնց առկայությունը պարտադիր է «պաշտոնատար անձ»-ի կողմից դատական իշխանություն իրականացնելիս: Սրանք այն հիմնական երաշխիքներն են, որոնք ապահովում են, որ անձի ձերբակալումը կամ կալանավորումը կամայական չէ և այդ անձի նկատմամբ վերաբերմունքը համապատասխանում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված նվազագույն չափանիշներին և սկզբունքներին:

Մ.Բ.-ն ընդդեմ Լեհաստանի գործով վճռում Դատարանը՝ հղում կատարելով իր նախկինում կայացրած Նիեդբալան ընդդեմ Լեհաստանի գործով վճռին հետևեց նույն ընթացակարգին, այն է՝ արդյոք վիճարկվող ժամանակահատվածում Լեհաստանի օրենսդրությամբ Դատախազը կարող էր համարվել «անկախությամբ» և «անաչառությամբ» օժտված «դատական» պաշտոնիա, ինչպես պահանջվում է ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ կետով: Այդ գործում Դատարանը գտավ, որ Դատախազը, Կոնվենցիայի իմաստով, չի կարող հանդես գալ որպես «դատական» պաշտոնիա: Եվ քանի որ Մ.Բ.-ն ընդդեմ Լեհաստանի գործի հանգամանքները նման էին այդ գործին, Դատարանը Մ.Բ.-ն ընդդեմ Լեհաստանի գործում նույնպես արձանագրեց 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

Վարույթ հարուցելու իրավունք- Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետ

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է.

Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

Քաղաքացիական և Քաղաքական Իրավունքների մասին Միջազգային Դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է.

... 4. Ձերբակալման կամ կալանքի տակ պահելու հետևանքով իր ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի դատարանում իր գործի քննության իրավունք, որպեսզի դատարանն անհապաղ կարողանա որոշել

³³ Տե՛ս Նիկոլոսյան ընդդեմ Բուլղարիայի գործով Եվրոպական դատարանի 1999 թվականի մարտի 5-ի վճիռը:

³⁴ Տե՛ս Ասենովն ու այլոք ընդդեմ Բուլղարիայի գործով Եվրոպական դատարանի 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը:

կալանավորման օրինականությունը և կարգադրել նրան ազատ արձակելու, եթե կալանավորումն անօրինակն է:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածը պաշտպանում է կամայական կալանավորումից և տրամադրում է անօրինական կալանքը վիճարկելու հնարավորություն: 5-րդ հոդվածի խախտումից խուսափելու համար, անհրաժեշտ է հստակորեն հետևել պատշաճ ընթացակարգերի: Ազատությունից զրկված անձի հիմնական իրավունքը Կոնվենցիայով նախատեսված դատական վարույթ հարուցելու իրավունքն է, որը, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով, հնարավորություն է տալիս անձին վիճարկելու իր կալանավորման «օրինականությունը»:

Կոնվենցիայի նորմերը և Եվրոպական Դատարանի վճիռները հաստատում են, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը չի տրամադրում որևէ երաշխիք, որոնք կապահովեն կալանավորման կամ դրա ժամկետը երկարացնելու մասին որոշման դեմ բողոքարկման իրավունքը: Այն երաշխավորում է 5-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված ընթացակարգի պահանջներին համապատասխանության իմաստով կալանավորման կան ձերբակալման օրինականությունը վիճարկելու իրավունքը: Ընդհանուր առմամբ, խոսքը գնում է «[դատական] ընթացակարգերի» և ոչ թե բողոքարկման մասին: Դե Ուայլդը, Ումսը և Վերսիփն ընդդեմ Բելգիայի (*De Wilde, Ooms and Versyp v. Belgium*) գործով վճռում Եվրոպական Դատարանը նշում է, որ.

Առաջին հայացքից 5-րդ հոդվածի 4-րդ կետը գուցե տառացի մեկնաբանվի այնպես, որ այն երաշխավորում է կալանավորված անձի՝ իրեն ազատությունից զրկելու վերաբերյալ կայացված նախկին որոշումների օրինականության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու իրավունքը: Սակայն երկու պաշտոնական տեքստերը չեն օգտագործում միևնույն տերմինները, քանզի Կոնվենցիայի անգլերեն տեքստում խոսքը գնում է «ընթացակարգերի» և ոչ թե «բողոքարկման», «պաշտպանություն» կամ «վնասների հատուցման» մասին (համեմատի 13-րդ և 26-րդ հոդվածները (հոդ. 13, հոդ. 26)): Բացի այդ, հստակ է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի (հոդ. 5-4) նպատակն է ձերբակալված կամ կալանավորված անձանց երաշխավորել իրենց հանդեպ կիրառված միջոցի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության իրավունքը երաշխավորելն է. «Դատարան» (տրիբունալ) տերմինը նշվում է այնտեղ եզակի և ոչ թե հոգնակի թվով...³⁵:

Եվրոպական Դատարանի վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ դեպքերում վարույթ հարուցելու իրավունքը, որն երաշխավորվում է 5-րդ հոդվածի 4-րդ կետով մասնակիորեն համընկնում է 5-րդ հոդվածի 3-րդ կետին և/կամ 5-րդ հոդվածի 1-ին կետին ա. ենթակետին, հատկապես այն գործերում, երբ քննարկվում է այնպիսի դատավարական երաշխիքներ, ինչպիսիք են դատարանի կամ տրիբունալի անկախության և անկողմնակալության հարցը, նաև որքանով է «դատական իշխանություն» իրականացնող «պաշտոնատար անձ»-ը

³⁵ Տե՛ս Դե Ուայլդը, Ումսը և Վերսիփն ընդդեմ Բելգիայի գործով Եվրոպական դատարանի 1971 թվականի հունիսի 18-ի վճիռը կետ 76:

բավարարում սահմանված պահանջները: Սակայն, Դատարանը հստակ սահմանել է, որ

... Այն դեպքում, երբ անձի ազատությունը սահմանափակող որոշումը կայացվում է վարչական մարմնի կողմից, միանշանակ 5-րդ հոդվածի 4-րդ կետը (հոդ. 5-4) պարտավորեցնում է Մասնակից Պետություններին հնարավորություն ընձեռնել կալանավորված անձին, որպեսզի նա հայցի դատարանի պաշտպանությունը: Սակայն, միևնույն դրույթը կիրառելի չէ այն դեպքերում, երբ որոշումը կայացրել է դատարանը դատավարության ժամանակ: Վերջին դեպքում 5-րդ հոդվածի 4-րդ կետով (հոդ. 5-4) պահանջվող վերահսկողությունը նախատեսվում է որոշման մեջ, երբ օրինակ, ազատագրված անասին դատավճիռը հայտարարվում է «իրավասու դատարանի կողմից մեղավոր ճանաչելու մասին դատավիճ» կայացնելուց հետո (Կոնվենցիայի հոդված 5 (1) (ա)) (հոդ. 5-1-ա): Եզրափակելով, կարելի է նշել, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը (հոդ. 5-4) կիրառելի է, երբ [5-րդ հոդվածի] 1-ին կետի e) ենթակետի (հոդ. 5-1-e) իմաստով թափառաշրջիկի ձերբակալումը կամ կալանավորումը 4-րդ կետի համաձայն (հոդ. 5-4) կատարվել է «դատարանի» որոշման հիման վրա³⁶:

Մ.Բ.-ն ընդդեմ Լեհաստանի գործում Կոնվենցիայի 5 –րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա Դիմումատուի բերած բողոքը բաժանվում էր երկու կետի:

Բողոքի առաջին մասը.

Դիմումատուն, նախ բողոքում էր, որ իր կալանավորման վերաբերյալ դատավարությունների ընթացքում ինքը երբևէ չի տարվել դատավորի մոտ, հետևաբար նաև հնարավորություն չի ունեցել արդյունավետորեն առարկել իր կալանավորումը հիմնավորող դատախազության փաստարկներին:

Կառավարությունն ընդունեց, որ դիմումատուն այդ ժամանակ գործող Քրեական Դատավարության Օրենսգրքի պահանջների ուժով չի մասնակցել իր կալանավորման կապակցությամբ անցկացված դատական լսումներին, որոնք տեղի են ունեցել Վարչավայի տարածքային և վերաքննիչ դատարաններում: Օրենսգրքի համաձայն կալանավորված անձը կամ նրա փաստաբանը իրավասու չէին մասնակցել այն դատական լսումներին, որտեղ որոշվում է անձի կալանավորման օրինականության հարցը:

Մ.Բ. -ի գործով վճիռ կայացնելով, Դատարանը վերահաստատեց, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման նյութական ու ընթացակարգային պայմանները, որոնք 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով էական են իրեն անազատության մեջ պահելու «օրինականության» հարցի որոշման համար: Դատարանն, ի հաստատումն իր դիրքորոշման, վկայակոչեց *Բրոգանն ու այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Brogan and Others v. the United Kingdom)* գործով 1988թ.-ի նոյեմբերի 29-ի վճիռն:

Դատարանը նշեց, որ չնայած այն փաստին, որ միշտ չէ, որ պահանջվում է 5-րդ հոդվածի 4-րդ կետի տակ ընկնող վարույթները համապատասխանեն այն նույն երաշխիքներին, որոնք, 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում են քաղաքացիական կամ քրեական դատաքննությունների համար, այնուամենայնիվ այդ վարույթները պետք է ունենան դատական բնույթ և ապահովեն վիճարկվող ազատության սահմանափակման տեսակին համապատասխան երաշխիքներ: Դատարանը հաստատեց նաև, որ շատ

³⁶ Տե՛ս նույն տեղում կետ 76:

կարևոր է, որ անձի համար, ում ազատությունը սահմանափակվում է, հասանելի լինի դատարանը և նա պաշտպանի իրեն անձամբ կամ եթե անհրաժեշտ է ներկայացուցչության որևէ ձևի օգտագործմամբ, որոնց բացառումը կնշանակի, որ անձին հնարավորություն չի ընձեռնվել օգտվելու «ազատության սահմանափակման դեպքում կիրառելի դատավարության հիմնարար երաշխիքներ»-ից:

Դատարանի վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալից, որ Դատարանը որդեգրել է այս մոտեցումը մի շարք այլ վճիռներում: Դե Ուայլդ, Ունս և Վերսիփն ընդդեմ Բելգիայի³⁷ (*De Wilde, Ooms and Versyp v. Belgium*) գործում Սագիստրատին, որը նաև համարվում է դատական մարմին, շնորհիվ էր վարչական բնույթի մի գարծառույթի, որը, համաձայն Բելգիայի օրենսդրության, պետք է առնչվեր թափառաշրջիկության հարցերին: Դատարանը գտավ, որ վարույթները չեն ապահովում դատական վերահսկողության երաշխիքներ, և հանգեց այն եզրակացության, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

Վինթերվերփն ընդդեմ Նիդեռլանդների³⁸ (*Winterwerp v. the Netherlands*) գործում Դատարանը հաստատեց իր դիրքորոշումը նշելով, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները կբավարարվեն, միայն.

... այն պայմանով, եթե «վարույթը ունենա դատական բնույթ և շահագրգիռ անձի համար ապահովի այնպիսի երաշխիքներ, որոնք համապատասխան են վիճարկվող ազատության սահմանափակման տեսակին»; «պետք է հատկապես ուշադրություն դարձնել այն հանգամանքներին, որոնց պայմաններում տեղի է ունենում այդ վարույթը՝ պարզելու համար, թե արդյոք վարույթի ընթացքում ապահովվում են համապատասխան երաշխիքները»³⁹:

Ուիքսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործում⁴⁰ (*Weeks v. UK*), երբ, համաձայն Անգլիայի օրենսդրության, բանտարկյալը դատապարտվեց անորոշ ժամանակով ազատազրկման, Դատարանը գտավ, որ դատավորների կողմից նախնական վճռի հայտարարման ժամանակ կիրառված տարրերը կարող են պահանջել հավելյալ ժամանակ: Դատարանի կողմից ազատության սահմանափակման օրինականությանն հարցի քննությունը պետք է հետևաբար իրականացվի բանտից կատարված յուրաքանչյուր «ահազանգի» դեպքում՝ ողջամիտ ժամանահատվածում⁴¹:

Դատարանի այլ վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանը, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետով երաշխավորված դատական քննության իրավունքի արդյունավետ պաշտպանության հարցը որոշելիս նաև մատնանշում է դատարանների և տրիբունալների անկախության և անկողմնակալության հարցը: Դ.Ն.-ն ընդդեմ Շվեյցարիայի⁴² (*D. N. v. Switzerland*)

³⁷ Տե՛ս նույն տեղում կետ 76:

³⁸ Տե՛ս Վինթերվերփն ընդդեմ Նիդեռլանդների գործով Եվրոպական դատարանի 1979 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը:

³⁹ Տե՛ս նույն տեղը կետ 57:

⁴⁰ Տե՛ս Ուիքսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1987 թվականի մարտի 2-ի վճիռը:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, կետ 58:

⁴² Տե՛ս Դ.Ն.-ն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 2001 թվականի մարտի 29-ի վճիռը:

գործում

Դատարանը

սահմանեց,

որ.

... Քննարկելով Ռ.Վ.-ի անկողմնակալությունը նրա կողմից դատավոր-
նեպորտյորի գործառույթներն իրականացնելիս, Դատարանը վկայակոչում է,
որ անկողմնակալությունը պետք է հաստատվի սուբյեկտիվ թեստի
կիրառմամբ, այսինքն, պարզելու համար դատավորի անձնական
շահագրգռվածությունը տվյալ գործում, ինչպես նաև՝ օբյեկտիվ թեստի
կիրառմամբ, համոզվելու, որ դատավորը ապահովել է բավարար
երաշխիքներ այդ կապակցությամբ բացառելու ցանկացած ողջամիտ
կասկած:⁴³

Բողոք երկրորդ մասը.

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա դիմումատուի բերած
բողոքի երկրորդ մասը վերաբերվում էր կողմերի հավասարության սկզբունքի
խախտմանը: Դիմումատուն մասնավորապես պնդում էր, որ Կոնվենցիայի 5-րդ
հոդվածի 4-րդ կետի պահանջները չեն բավարարվել, և իր կալանավորման
առնչվող դատավարությունը չի եղել նրցակցային, քանի որ ոչ իրեն անձամբ, ոչ իր
փաստաբանին իրավունք չի վերապահվել ներկայանալու դատարանի առջև և
ժանոթանալու դատախազության կողմից ներկայացված դիմումատուի
մեղավորությունը հիմնավորող փաստարկներին:

«Կողմերի հավասարության» սկզբունքը միջազգային իրավական
կոնցեպցիա է և շատ կարևոր երաշխիք արդար դատաքննության համար: Կողմերի
իրավահավասարությունը, որը պետք է պահպանվի դատաքննության ամբողջ
ընթացքում, ենթադրում է, որ երկու կողմերին ցուցաբերվում է այնպիսի
վերաբերմունք, որով երաշխավորվում է դատաքննության ընթացքում նրանց
հավասար վիճակում գտնվելը և հավասար պայմաններում իրենց գործը
վիճարկելը⁴⁴: Դա նաև նշանակում է, որ յուրաքանչյուր կողմին պետք է
տրամադրվի ողջամիտ հնարավորություն ներկայացնելու իր գործը այնպիսի
պայմանների արկայությամբ, որով որևէ կողմ հակառակ կողմի նկատմամբ չի
ունենա էական առավելություն⁴⁵:

Եվրոպական Դատարանի վճիռների ուսումնասիրությունից պարզ է
դառնում, որ «կողմերի հավասարության» սկզբունքը կիրառելի է ոչ միայն
Կոնվենցիայի 6-րդ հոդվածի (արդար դատաքննության իրավունք), այլ նաև 5-րդ
հոդվածի 4-րդ կետի նկատմամբ, այն դեպքերում, երբ, դատավարության
սկզբնական փուլում, որոշվում են ձերբակալման կամ կալանավորման
օրինականության հարցերը: Եվրոպական դատարանը, թոթն ընդդեմ Ավստրիայի
(Toth v. Austira) գործում սահմանել է.

⁴³ Տե՛ս նույն տեղում, կետ 44:

⁴⁴ Տե՛ս Օֆրերի թիվ 524/59 և Յոֆֆինգերի թիվ 617/59 գործերով Եվրոպական դատարանի
վճիռները: Տարեկան զեկույց 6, էջեր 680 և 696: Տե՛ս նաև «Իրավունքի գերակայությունը, արդար
դատաքննությունն ու դատական բարեփոխումները», Մարդու իրավունքների միջազգային
կոմիտե, 2003թ.: URL: http://www.ichr-law.org/english/expertise/areas/rule_of_law.htm

⁴⁵ Ամնիսթի Ինթերնեյշնլ, Արդար դատաքննության վերաբերյալ ձեռնարկ: Ամնիսթի Ինթերնեյշնլի
հրատարակություններից, 1998 թ., կետ 13.2. URL:
http://www.amnesty.org/ailib/intcam/fairtrial/indxftm_b.htm

... Փաստորեն, արն. Թոթը հնարավորություն չի ունեցել ըստ արժանվույն վիճարկելու այն պատճառները, որոնց հիման վրա երկարացվել է իրեն կալանքի տակ պահելու ժամկետը: Վերաքննիչ դատարանի կողմից առաջ բերված յուրաքանչյուր հարց կարող էր հնարավորություն ընձեռել մեղադրող կողմի ներկայացուցչին ներկայացնելու իր տեսակետները: Դրանք կարող էին իրենց ազդեցությունը ունենալ դատարանի անդամների վրա մինչև որոշման կայացումը: Քանի որ դատավարությունը չի ապահովել հավասար պայմաններ, հետևաբար այն մրցակցային չէր (տե՛ս *mutatis mutandis*, Սանչես-Ռայզեի (Sanchez-Reisse) գործով 1986թ. հոկտեմբերի 21-ի ճիշդ, Շարք Ա, թիվ 107, էջ. 19, կետ 51)⁴⁶:

Դատարանի այլ վճիռների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Դատարանը իր հետագա վճիռներում ավելի առաջ է զննացել 5-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանման հարցում: Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի⁴⁷ (*Nikolova v. Bulgaria*) գործով վճռում Դատարանը վկայակոչում է դատավորի գործողությունների օրինականության ձևական և բովանդակային պայմանները:

... ձերբակալված կամ կալանավորված անձինք իրենց ազատության սահմանափակման դատավարական և նյութական հիմքերի վերանայման իրավունք ունեն, ինչը, Կոնվենցիայի իմաստով, իրենց ազատության սահմանափակման «օրինականության» որոշման համար կարևոր է: Սա նշանակում է, որ իրավասու Դատարանը պետք է քննության առնի «ոչ միայն դատավարական պահանջների համապատասխանությունը [ներպետական օրենսդրությանը], այլ նաև կասկածի հիմնավորվածությունը, որի հիման վրա իրականացվել է ձերբակալումը, ինչպես նաև ձերբակալման և կալանավորման նպատակի օրինականությունը» (...) Դատարանը քննելով կալանավորումը վիճարկող հայցը պետք է ապահովի դատավարական երաշխիքներ: Դատավարությունը պետք է լինի մրցակցային և միշտ ապահովի կողմերի, դատախազի և կալանավորված անձի միջև «կողմերի հավասարության» սկզբունքը: (...) Կողմերի հավասարության սկզբունքը չի կարող համարվել պահպանված, եթե փաստաբանին արգելվել է ծանոթանալ այն փաստաթղթերի հետ, որոնք անհրաժեշտ են արդյունավետորեն վիճարկելու իր պաշտպանյալի կալանավորման օրինականությունը: (...) [Դատական] լսումները պարտադիր են, եթե նձի կալանավորումը կատարվել է 5-րդ հոդված 1-ին կետի (c) ենթակետի հիմքով:...

Եվրոպական դատարանի առավել վաղ կայացված վճիռների ուսումնասիրությունից բխում է, որ Դատարանը դիտարկում է «օրինականություն» սկզբունքը՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին ձերբակալման կամ կալանավորման համապատասխանությունը որոշելիս, մասնավորապես այն, թե արդյոք ներպետական դատարանները ապահովել են կալանավորված անձի իրավունքը «պարզելու, արդյոք իր կալանավորումը կատարվել է ներպետական օրենքներին և Կոնվենցիային համապատասխան, և կամայական բնույթ չի կրում»:⁴⁹ Դիտարկման ենթակա կարևոր հարցերից մեկը համապատասխան

⁴⁶ Տե՛ս Թոթն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 1992 թվականի վճիռը, կետ 84:
⁴⁷ Տե՛ս Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի գործով Եվրոպական դատարանի 1999 թվականի մարտի 25-ի վճիռը:
⁴⁸ Տե՛ս նույն տեղում, կետ 58:
⁴⁹ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման ուղեցույց» Մոնիկա Մակովեյ, Եվրոպայի Խորհուրդ, Մարդու իրավունքների վերաբերյալ ձեռնարկ, թիվ 5:

ընթացակարգերի առկայությունն է, որը հնարավորություն կընձեռի կալանավորված կամ ձերբակալված անձին վիճարկելու իրեն վերագրվող իրավախախտում կատարելու մեջ կասկածանքի փաստական կողմը կամ պատճառաբանվածությունը: *Ջուլիոսն ընդդեմ Լիտվայի (Jėčius v. Lithuania)* գործում Եվրոպական դատարանը սահմանեց.

... Դատարանը կրկին անգամ նշում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը իրավունք է վերապահում ձերբակալված կամ կալանավորված անձին վարույթ հարուցել Կոնվենցիայի իմաստով իրենց ազատության սահմանափակման «օրինականության» համար էական նշանակություն ունեցող դատավարական ու նյութական պահանջները վիճարկելու համար: Սա նշանակում է, որ իրավասու դատարանը պետք է ոչ միայն քննարկի ներպետական օրենսդրության դատավարական պահանջներին համապատասխանության հարցը, այլ նաև ձերբակալման համար հիմք հանդիսացող կասկածանքի հիմնավորվածությունը և ձերբակալման և դրան հաջորդող կալանավորման նպատակի իրավաչափությունը (տես «Բրոգանը և այլոք ընդդեմ Միավորված Թագավորության (Brogan and Others v. the United Kingdom) գործով 1988թ. նոյեմբերի 29-ի վճիռը, Շարք Ա, թիվ 145-Բ, էջեր 34-35, կետ 65)⁵⁰:

Այսպիսով, «արդար դատաքանության» սկզբունքը, մասնավորապես «կողմերի հավասարության» սկզբունքը, ինչպես նաև անկողմնակալ և անկախ դատարանի կողմից դատաքննության իրավունքը, կարևոր են կալանավորման «օրինականության» որոշման համար:

«Նիդբեկան ընդդեմ Լեհաստանի»⁵¹ (*Niedbala v. Poland*), գործում Դատարանը, վկայակոչելով Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի (*Nikolova v. Bulgaria*) գործին, վերահաստատեց, որ կողմերի, մեղադրողի և կալանավորված անձի միջև «կողմերի իրավահավասարության» սկզբունքի ապահովումը, հատկապես կալանավորման մասին որոշման դեմ բերված բողոքի քննության վարույթում, անհարժեշտություն է⁵²:

Դիտարկվող գործով վճռում Դատարանը հետևեց իր արդեն հաստատած մոտեցմանը, այն է. կալանքի «օրինականության» հարցը քննարկելիս արդար դատաքննության, ներառյալ «կողմերի հավասարության» սկզբունքների կիրառելիությունը: Դատարանը նշեց, որ ոչ Դիմումատուին և ոչ էլ նրա փաստաբանին օրենքը թույլ չէր տալիս ներկա գտնվել կալանավորման օրինականության հարցի որոշման վերաբերյալ դատաքննությանը, ներառյալ կալանավորման ժամկետի երկարացման վերաբերյալ վարույթներին: Ավելին, գործող օրենսդրությունը չէր նախատեսում, որ դիմումատուի կալանավորման կապակցությամբ մեղադրողի փաստարկները ներկայացվեն դիմումատուին կամ նրա փաստաբանին: Դատարանը ի լրումն նշեց նաև, որ մեղադրողին հնարավորություն էր տրվում ներկա գտնվել համապատասխան դատական լսումներին և, կասկածյալի բացակայության պայմաններում փաստարկներ ներկայացնել կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման կապակցությամբ, մինչդեռ Դիմումատուն և/կամ իր փաստաբանը իրավունք չունեին ծանոթանալու

⁵⁰ Տե՛ս *Ջուլիոսն ընդդեմ Լիտվայի* գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի հուլիսի 31-ի վճիռը, կետ 100:

⁵¹ Տե՛ս Նեյդբալան ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի հուլիսի 4-ի վճիռը:

⁵² Տե՛ս նույն տեղում, կետ 66:

դրանց հետ կամ հակափաստարկներ կամ մեկնաբանություններ ներկայացնելու: Դատարանը նշեց նաև այն փաստը, որ Դիմումատուի առողջական վիճակը, որը ի վերջո հանգեցրեց նրա մահվանը, այնպիսի հանգամանք էր, որը պետք է գործեր ի հոգուտ դատավարական լսումներին դիմումատուի անձնապես ներկա գտնվելուն, և եթե նրան նման հնարավորություն տրվեր մասնակցելու դատական լուսններին, ապա կարող էր իրավասու մարմիններին համոզել ազատ արձակելու նրան: Այս փաստերի և համոզմունքների լույսի ներքո, Դատարանը եզրակացրեց, որ Դիմումատուի համար դատավարությունը արդյունավետ չի եղել⁵³: Այլ խոսքերով, Լեհաստանի իշխանությունները Դիմումատուի գործի քնության ժամանակ չեն ապահովել դատարանում կողմերի հավասարության սկզբունքը:

Այդ իսկ պատճառով, Դատարանը գտավ, որ Դիմումատուի կալանավորման վերանայման վերաբերյալ վարույթները լիովին չեն բավարարել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված սահմանված երաշխիքներին:

ՄԱՍ III. ԳՈՐԾԻ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԼՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Եվրոպական դատարանը Մ.Բ.-ն ընդդեմ Լեհաստանի գործով կայացրած վճռում երկու շատ կարևոր հանգամանք հաստատեց, որոնք կարևոր երաշխիքներ են ազատագրությունից զրկված անձանց համար: Դրանք են՝ դատավորի մոտ տարվելու իրավունքը և վարույթ հարուցելու իրավունքը, որոնք նախատեսված են Կոնվենցիայի 5-րդ հոդվածով:

1. Դատավորի մոտ տարվելու իրավունք/«պաշտոնատար անձ» -ի հասկացությունը: Դատարանը հաստատեց, որ «դատական իշխանություն» իրականացնող պատշաճ մարմին համարվելու համար «պաշտոնատար անձ»-ը պետք է բավարարի որոշակի պահանջների: Այդ պահանջներից Դատարանը, հղում կատարելով իր Նեյդբալան ընդդեմ Լեհաստանի *Niedbala v. Poland* գործով վճռին, մասնավորապես ընդգծեց հետևյալը. ա) «պաշտոնատար անձը» պետք է անկախ լինի գործադիր իշխանությունից, բ) «պաշտոնատար անձը» պետք է անկախ լինի կողմերից: «Մ.Բ. ընդդեմ Լեհաստանի» գործով վճռում Դատարանը սահմանեց, որ.

Դատարանը վկայակոչեց, որ «Նեյդբալան ընդդեմ Լեհաստանի» գործով վճռում (թիվ 27915/95, կետեր 48-57, 2000թ., հուլիսի 4) արդեն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք գործով իրադարձությունների տեղի ունենալու ժամանակ գործող Լեհաստանի օրենսդրության համաձայն դատախազը կարող է համարվել «դատական պաշտոնի»՝ օժտված «անկախության» և «անկողնակալության» հատկանիշներով, որոնք պահանջվում են 5-րդ հոդվածի 3-րդ կետով: Դատարանը որոշեց, որ այս գործում տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, հիմք ընդունելով այն, որ դատախազը չի ապահովել նշված անհրաժեշտ երաշխիքները⁵⁴:

Սույն վերլուծությունում ներկայացվել է մանրամասն ուսումնասիրություն այս և այլ հատկանիշների վերաբերյալ, որոնք Դատարանը քննարկում է որոշելու դատական գործառույթներ իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր հակաանիշներին «պաշտոնատար անձ»-ի՝ բավարարելու հարցը:

⁵³ Տե՛ս Մ.Բ.-ն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 2004 թվականի հուլիսի 27-ի վճիռը, կետ 66:

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, կետ 59:

2. Դատարանը վերահաստատեց կալանավորման «օրինականության»
դատական կարգով վիճարկման կարևորագույն սկզբունքը

Մ.Բ.-ն ընդդեմ Լեհաստանի գործով կայացրած վճռում Դատարանը հաստատեց և ընգծեց մի շարք սկզբունքներ, որոնք երաշխավորում են ազատությունից զրկված անձի վարույթ հարուցելու իրավունքը, մասնավորապես այն, որ.

- ա) Ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի վարույթ հարուցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով իր ազատության սահմանափակման «օրինականության» համար էական նշանակություն ունեցող դատավարական ու նյութական պահանջները վիճարկելու համար⁵⁵:
- բ) Ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի պաշտպանել իրեն անձամբ կամ, անհրաժեշտության դեպքում ներկայացուցության որևէ ձևի օգտագործմամբ: Մ.Բ.-ի գործով Դատարանը ընդգծեց ազատությունից զրկված անձի առողջական վիճակը հաշվի առնելու կարևորությունը⁵⁶:
- գ) Վարույթները պետք է լինեն մրցակցային: Սա ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալ իրավունքներով ու երաշխիքներով. Դատարանին ցանկացած ապացույց ներկայացնելու իրավունք, որոնք անհրաժեշտ է իր հայցի հաջողության համար, Դատարանի կողմից բերված կամ դիտարկվող ցանկացած փաստին կամ ապացույցին ծանոթանալու իրավունք, և անհրաժեշտության դեպքում նաև դրանք վիճարկելու իրավունք, կողմերի հավասարության սկզբունքի պահպանման իրավունք⁵⁷, ժամանակին բոլոր համապատասխան դատավարական փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, և [իր գործի վերաբերյալ] անհապաղ որոշման կայացման իրավունք, քաղաքացիական դատավարություններում վկաներ կանչելու և հերքելու իր դեմ տրված ցուցմունքները, գործը ներկայացնելու պատշաճ հնարավորության իրավունք, ներառյալ նաև ապացույցներ ներկայացնելու և մյուս կողմի բերված ապացույցների դեմ առարկելու իրավունք⁵⁸:
- դ) 6-րդ հոդվածով երաշխավորված «արդար դատաքննության», մասնավորապես անկախությանն ու օբյեկտիվությանը⁵⁹ նկատմամբ կիրառելի պահանջներին համապատասխան դատաքննության իրավունք: Քննարկվող գործով վճռում Եվրոպական դատարանը, ընդունելով այն փաստը, որ ոչ միշտ է անհրաժեշտ, որպեսզի 5-րդ հոդվածի 4-րդ կետը համաձայն

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, կետ 65:

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, կետ 66:

⁵⁷ «Կողմերի հավասարության» սկզբունքը նշանակում է, որ վարույթի կողմերը պետք է «հավասար հիմքերի» վրա լինեն, որ կողմերը պետք է հավասար հնարավորություն ունենան ծանոթանալու գործի նյութերին և գործով այլ անհրաժեշտ փաստաթղթերին:

⁵⁸ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման ուղեցույց» Մոնիկա Մակովեյ, Եվրոպայի խորհուրդ, Մարդու իրավունքների վերաբերյալ ձեռնարկ թիվ 5: Տե՛ս նաև Իրավունքի գերակայությունը, արդար դատաքննությունն ու դատական բարեփոխումները», Մարդու իրավունքների միջազգային կոմիտե, 2003թ.: URL: http://www.ichr-law.org/english/expertise/areas/rule_of_law.htm

⁵⁹ Տե՛ս Մ.Բ.-ն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 2004թ. հուլիսի 27-ի վճիռը կետ 65: Տե՛ս նաև «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման ուղեցույց» Մոնիկա Մակովեյ, Եվրոպայի խորհուրդ, Մարդու իրավունքների վերաբերյալ ձեռնարկ թիվ 5:

իրականացվող վարույթների նկատմամբ կիրառվեն միևնույն երաշխիքները, ինչ որ հոդված 6(1)-ով պահանջվում է քաղաքացիական և քրեական վեճերի դեպքում, սահմանեց, որ կալանավորման կամ ձերբակալման օրինականության վիճարկման վարույթը «պետք է ունենա դատական բնույթ և ապահովի երաշխիքներ, որոնք համապատասխան են վիճարկվող ազատության սահմանափակմանը»⁶⁰:

ե) Կալանավորման «օրինականության» հարցի որոշման վերաբերյալ վարույթները պետք է ունենան «դատական բնույթ»՝ Կոնվենցիայի 5(4) հոդվածի իմաստով⁶¹:

Սրանք էին այն հանգամանքերը, որոնք Ղատարանը քննեց Մ.Բ-ի գործով և գտավ, որ դիմումատուի կալանքի վիճարկմանը վերաբերող վարույթները անբողջությամբ չէին համապատասխանում ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված երաշխիքներին:

⁶⁰ Տես Մ.Բ-ն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 2004թ. հուլիսի 27-ի վճիռը կետ 65:

⁶¹Տե՛ս նույն տեղում: